

«ՎԱՐՈՂ» ԾՐԱԳԻՐ

Ո՞Վ ԿԱՐՈՂ Է ԱՊԱՅՈՎԱԳՐՎԵԼ

Ապահովագրվել կարող է ցանկացած գործունակ վարորդական վկայական ունեցող ԱՄ-ի վարորդ (18-70 տարեկան) և ԱՄ-ի ուղևորները՝ ըստ ցանկության:

Ո՞Վ ԶԻ ԿԱՐՈՂ ԱՊԱՅՈՎԱԳՐՎԵԼ

- I և II խմբի հաշմանդամները
- կայուն նյարդային/հոգեբանական խախտումներով և/կամ հիվանդություններով տառապող անձինք
- անձինք, ովքեր հաշվառված են նյարդահոգեբանական և/կամ սարկոլոգիական և/կամ հակատուբերկուլոզային դիսպանսերներում
- ստացիոնար, ամբուլատոր բուժման կամ հետազոտության մեջ գտնվող անձինք (մինչև նրանց լրիվ բուժվելը)
- ՁԻԱԶ-ով կամ այլ իմունոդեֆիցիտային հիվանդություններով անձինք
- հետախուզման մեջ գտնվող կամ ազատագրկման դատապարտված անձինք
- առողջական վիճակից ելնելով՝ մշտական խնամքի կարիք ունեցող անձինք
- գինվորական ծառայություն անցնող անձինք

Ի՞ՆՉՆ Է ՀԱՄԱՐՎՈՒՄ ԱՊԱՅՈՎԱԳՐՎԱԿԱՆ ՊԱՏԱՅԱՐ

- մարմնական վնասվածքներ,
- I, II խմբի հաշմանդամության,
- «Հաշմանդամ երեխա» կարգավիճակի ձեռք բերում
- մահ

որոնք առաջացել են ստորև նշվածի հետևանքով.

- դժբախտ պատահարի
- քիմիական նյութերով և կենսաբանական ծագման թույլներով հանկարծակի սուր թունավորման
- շնչահեղձման՝ շնչուղիներ օտար մարմնի հանկարծակի ընկնելու
- ջրահեղձման
- անաֆիլակտիկ շոկի
- մարմնի գերսառեցման

ԻՆՉ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐՈՎ ԿԱՐԵԼԻ Է ԱՊԱՅՈՎԱԳՐԵԼ

ՖԻԶՍՎԱԾ ԳՈՒՄԱՐՈՎ ՀԱՏՈՒՅՈՒՄ	
ՏԱՐԲԵՐԱԿ 1	ՏԱՐԲԵՐԱԿ 2
<ul style="list-style-type: none"> Մարմնական վնասվածք 	
<ul style="list-style-type: none"> I, II, III խմբի հաշմանդամություն «Հաշմանդամ երեխա» կարգավիճակի ձեռք բերում 	<ul style="list-style-type: none"> I, II, III խմբի հաշմանդամություն «Հաշմանդամ երեխա» կարգավիճակի ձեռք բերում
<ul style="list-style-type: none"> Մահ 	<ul style="list-style-type: none"> Մահ

ԲԺՇԿԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՏՈՒՅՈՒՄ	
ՏԱՐԲԵՐԱԿ 1	ՏԱՐԲԵՐԱԿ 2
<ul style="list-style-type: none"> Մարմնական վնասվածք ճՏՊ-ի արդյունքում 	<ul style="list-style-type: none"> Մարմնական վնասվածք ճՏՊ-ի արդյունքում
<ul style="list-style-type: none"> I, II, III խմբի հաշմանդամություն «Հաշմանդամ երեխա» կարգավիճակի ձեռք բերում ճՏՊ-ի արդյունքում 	<ul style="list-style-type: none"> I, II, III խմբի հաշմանդամություն «Հաշմանդամ երեխա» կարգավիճակի ձեռք բերում ճՏՊ-ի արդյունքում
<ul style="list-style-type: none"> Մահ ճՏՊ-ի արդյունքում 	<ul style="list-style-type: none"> Մահ ճՏՊ-ի արդյունքում

ԻՆՉԸ ՉԻ ՀԱՄԱՐՎՈՒՄ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՅԱՐ

- Վարորդի կողմից առանց տվյալ կարգի վարորդական իրավունքի ԱՄ վարելու կամ իր կողմից ԱՄ-ի վարումը տվյալ կարգի վարորդական իրավունք չունեցող անձին փոխանցելու հետևանքով
- Վարորդի կողմից ալկոհոլային, թմրանյութային կամ տոքսիկ հարբեցման վիճակում ԱՄ վարելու կամ ալկոհոլային, թմրանյութային կամ տոքսիկ հարբեցման վիճակում գտնվող անձի ԱՄ-ի վարումը փոխանցելու հետևանքով
- Վարորդի կամ ուղևորի ալկոհոլային թունավորման հետևանքով կամ առանց բժշկի նշանակման (կամ բժշկի նշանակմամբ, սակայն նրա կողմից նշված դեղաբանական խախտմամբ) թմրանյութերի, տոքսիկ և հոգեմետ նյութերի օգտագործման արդյունքում թմրանյութային/տոքսիկ հարբեցման և/կամ թունավորման հետևանքով
- Վարորդի կամ ուղևորի կողմից դիտավորյալ հանցանք գործելու հետևանքով
- Վարորդի կամ ուղևորի կողմից ինքն իրեն դիտավորյալ մարմնական վնասվածք պատճառելու հետևանքով
- Վարորդի կամ ուղևորի դիտավորյալ գործողությունների արդյունքում
- Վարորդի կամ ուղևորի ինքնասպանության (ինքնասպանության փորձի) արդյունքում, բացառությամբ այն դեպքերի, երբ Ապահովագրված անձը հասցվել էր նման վիճակի երրորդ անձանց անօրինական գործողությունների արդյունքում
- Վարորդի կամ ուղևորի մոտ զարգացած հոգեկան հիվանդության հետ կապված գործողությունների հետևանքով
- Միևեւ պայմանագրի ուժի մեջ մտնելը Վարորդի ստացած մարմնական վնասվածքի/դրա հետևանքների հետևանքով
- Վարորդի կողմից ավտո և մոտոսպորտով պրոֆեսիոնալ զբաղվելու, մրցույթներում, փորձարկումներում փոխադրամիջոցը վարելու հետևանքով,

- Վարորդի կողմից որոշակի վճարի դիմաց ուղևորներ և/կամ բեռներ տեղափոխելու նպատակով փոխադրամիջոցը վարելու հետևանքով (տաքսի),
- Անձանց հետ, որոնք պատկանում են «ապահովագրման ենթակա չեն»
- բաժնում նշված անձանց կատեգորիայի

ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ապահովագրական ընկերությունն ազատվում է հատուցում կատարելու պարտավորությունից, եթե պատահարն առաջացել է՝

- միջուկային պայթյունի, ճառագայթման կամ ռադիոակտիվ վարակման ներգործության արդյունքում,
- ռազմական գործողությունների, ինչպես նաև զորաշարժերի կամ այլ ռազմական միջոցառումների արդյունքում,
- քաղաքացիական պատերազմի, ցանկացած տիպի ժողովրդական հուզումների կամ գործադուլների, ահաբեկչական գործողությունների արդյունքում: